ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանը հայտարարում է գյուղատնտեսական նշանակության հողամասերից վարձակալությամբ հողատարածքներ տրամադրելու մրցույթ: Մրցույթը տեղի կունենա Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 62 հասցեում գտնվող Արտաշատի համայնքապետարանում՝ 2026 թվականի սեպտեմբերի 3-ին ժամը 11:00-ին:

Մրցույթի է ներկայացվում հետևալ հողամասը.

Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Ա.Մյասնիկյան փողոց 166/1 հասցեում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, 03-001-0041-0055 կադաստրային ծածկագրով 0.0146 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը, տրամադրվող հողամասի վարձավճարի մեկնարկային գինը սահմանել՝ տարեկան 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Վարձակալության ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

Մրցույթին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերն են՝ անձը հաստատող փաստաթուղթը և նախավճարի անդորագիրը:

Մրցույթի մասնակցության վճարը կազմում է 15000 ՀՀ դրամ:

Մասնակցության տոմսի արժեքը կազմում է՝ 1000 ՀՀ դրամ:

Մրցույթի նախավճարի չափ է սահմանվել վարձավճարի մեկնարկային գնի 5%, մրցույթի քայլի չափ է հաշվարկված մեկնարկային գնի 5%:

Մրցույթի հայտերի, մասնակցության վճարների անդորագրերի, պահանջվող մյուս փաստաթղթերի ընդունումը կդադարեցվի մրցույթի նշանակման օրից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ՝ մինչև 2026 թվականի օգոստոսի 28-ը ներառյալ:

Տվյալ հողամասերը ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ընդգրկված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, հողամասերի օգտագործումը չի առաջացնում սերվիտուտ:

Առաջացած հարցերի և տեղեկությունների համար դիմել Արտաշատի համայնքապետարան մրցույթային հանձնաժողովին: Հեռախոս՝ 093773866

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԿՐՏՉՅԱՆ